

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մ. Տ. Ղևոս. «ՄերՁեցՈՒՄ». Անուրջներ. 46 հր. գ. 20 կ. Քարիզ, 1903.

Պ. Շևոտի գրուածքը մի ուտոպիական պատմուածք է, «անուրջ» է:

«Պուրժուազայի եւ ամբողջի մերձեցումը... մի խնդիր է, որի լուծումը մի հսկայ գրաւական կը լինի Համայնականների սկզբունքի յաղթանակին:—Այդ խնդրի լուծումով ազգային կեանքը յառաջագիմական թոխչքներ գործած կը լինի»:—Այս բնաբանն է տպուած պ. Շևոտի գրքոյկի երեսին:

Պ. Շևոտի կարծիքով, շատ հեշտ միջոց կայ լցնելու այն անդունդը, որ բաժանում է իրարից դրամատէր և դրամադուրկ դասակարգերը: Բաւական է համոզել հարուստներին և նրանց աղջիկներին, որ ամենալաւ փեսացուները բեռնակիրներն են, և այն ժամանակ «չափաւոր աստիճանաւորումով» գլուխ կը գայ բուրժուազիայի և պրոլետարիատի մերձեցումը, իսկ այդ մերձեցումը, ինչպէս տեսանք, «մի հսկայ գրաւական կը լինի Համայնականների սկզբունքի յաղթանակին»:

Համայնականներին անշուշտ վերին աստիճանի միամիտ կը թւան պ. Շևոտի հերոսների դատողութիւնները հասարակական ամենաբարդ հարցերի մասին, բայց մեր լուսաւորուած դարում «սահման քաջաց պրիչ իւրեանց»,—հեղինակները ինչ ուզեն կը գրեն, ինչպէս ուզեն կը գրեն:

Անցնենք պատմուածքի բովանդակութեանը:

Մի հայ բեռնակիր մի գեղեցիկ օր յանկարծ վճռում է այլ ևս չը բանել սովորական վարձով, այլ պահանջել տասնապատիկը (20 դահեկան կամ 1 ը. 50 կ. մի շալակ տանելու համար): Մի կրեսոս, կարծելով, թէ բեռնակիրը կատակ է անում,

վարձում է նրան: Բեռնակիրը մտնում է կրեսոսի պալատը, տեսնում է նրա զեղեցկուհի աղջկան, շլանում է իրան չրջապատող փայլից և պալատի սանդղեղքներով բարձրանալիս սկսում է երազել, թէ ինչ լաւ կը լինէր, եթէ բոլոր հարուստները այս պարոնի նման առատաձեռն լինէին: Այն ժամանակ նա կը կարողանար բախտաւորացնել աշխատաւոր դասակարգը և միանգամայն ինքն էլ բախտաւորուել: «Բաւականին կոկիկ կը հագուէր և մի սուն էլ կը գնէր... Այնուհետեւ կը գար և այդ նազելի օրիորդի ձեռքը կը խնդրէր... նրա հայրը, կարծեմ, չէր մերժեր»...

Այնքան առաջ է գնում երազելում մեր պարոն բեռնակիրը, որ երևակայում է, թէ արդէն Արտաշէս անունով մի որդի ունի, ուզում է գրկել նրան, ձեռքերը մեկնում է դէպի նա, և այդ ժամանակ շալակը վայր է ընկնում, վայր է գցում յետից եկող հարուստին, և միջի ապակեղէնները ջարդուփշուր են լինում:

Պ. Լուսինեանը (այդպէս է կրեսոսի ազգանունը) չի բարկանում բեռնակիր վրայ: Ընդհակառակը, հրաւիրում է դահլիճ, խնդրում է նստի բազկաթոռներից մէկի վրայ և բացատրի, թէ «ինչ էր մի մէծիտից վարձագին ուղելու պատճառը»:

«Բառնակիրը տեղնիտեղով պատմեց՝ ընթերցողին ծանօթ վճոխ մասին (գլ. I)»:

Այնուհետեւ պ. Լուսինեանը հարցնում է, թէ «ինչու անըզգոյշ գտնուեցաւ, որ շալակը բաց թողեց»:

Բեռնակիրը «պատմեց մի առ մի այն ամենը, ինչ որ մենք ներկայացրինք մեր ընթերցողներին (գլ. IV)»:

«Բեռնակիրը իսկոյն քնեց, իսկ պ. Լուսինեանը՝ կէս-քուն կէս-զարթուն այդ գրութեան մէջ մի զարմանալի երազ տեսաւ»:

«Որպէս թէ իր աղջկայ հետ ներկայ էին մի խառն ժողովի որ տեղի կուենար Համազգային ժողովարանի դահլիճում: Այդտեղ զանազան ազգութեան պատկանող բազմաթիւ երիտասարդներ առանց սեռի և դասակարգի խտրութեան, տաք վիճաբանութիւնների մէջ էին: Գաղափարական ընդհարումների ժամանակ խանդն ու աւիւնը մարմնացած էին վիճողներ մէջ»:

«Պ. և Օր. Լուսինեանները մօտեցան դահլիճի կենդրոնում դրած մեծ-սեղանը շրջապատող խմբին, ուր կրակոտ երիտասարդները կը վիճէին հարուստ և հասարակ դասակարգերի մէջ աչքի զարնող դասակարգային անհամաձայնութիւնների—զանազան խտրութիւնների, յարաբերութեան անջրպետների և

միով բանիւ, նրանց մէջ տիրող հակառակութիւնների—վերացման և մերձեցման տեղի տալու վրայ:

«Վիճողները նպատակ էին ընտրել իմանալ. թէ ինչ միջոցով կարելի էր յիշեալ երկու դասակարգերի մէջէն արմատախիլ անել փոխադարձ ատելութիւնները, տեղի տալով Պուրժուզիայի և ամբոխի մերձեցման: Որով ապագայում հնարաւոր պիտի լինէր ի մի ձուլել (assimilation) այդ դասակարգերին...»

Այդ ժողովում պ. հեղինակը՝ երիտասարդ Շաւարշի բերնով՝ յայտնում է իր հասարակագիտական հայեացքները, որոնց ամփոփումն է ձառի հետեւեալ հատուածը. «Չափաւոր անտի-ճանաւորում—ահա այն ամենազօրեղ միջոցը, որով կարելի կը լինի նիւթական պայմաններում անհամաձայնութիւնների կապը, զգալի չափով, թուլացնել և տեղի տալ բարոյականին... Իսկ չափաւոր անտիճանաւորում ասելով պէտք է հասկանալ՝ առաջին դասակարգի (քարձր) կողմէն նիւթական-օժանդակիչ գիշողութիւններ և երկրորդի կողմէն՝ ձգտումն դէպի բաւականաչափ համակերպումը...»

«Չափաւոր անտիճանաւորումի» սկզբունքի գործադրութեան ամենաէական ձևն է ըստ, պ. Շառտի, հարուստների ամուսնութիւնը չքաւորների հետ:

Պ. Լուսինեան ևրազից սթափուելով՝ վճռում է իր աղջկան կնութեան տալ բեռնակրին, եթէ՝ իհարկէ՝ աղջիկը համաձայնի: Աղջիկը, լսելով հօջ ևրազը, իսկոյն համաձայնում է ամուսնանալ բեռնակրի հետ, եթէ համոզուի, որ նա համակրելի մարդ է, և վերջիվերջոյ համոզուելով այդ բանում՝ ամուսնանում է հետը:

«Նրանք, վերջացնում է հեղինակը, մի բաղդաւոր զոյգ կազմեցին և այսօր, ի միջի այլոց, կը պարծենան ոչ թէ մի Աբտաշէսով, այլ կէս տիւժին հրեշտականման երեխանցով, որոնք միժամալէ յետոյ շատ բան պիտի պատմեն մեզ...»

Յուսանք, որ նրանց պատմածները աւելի խելացի բաներ են լինելու, և որ նրանք իրանց խօսածների և գրածների մէջ չեն գործածիլ այնպիսի օտարազգի բառեր և դարձուածքներ, որոնց իմաստը չեն հասկանում,—ինչպէս այդ անում է պ. Շառտը, որ բոլորովին անտեղի և անիմաստ կերպով է գործածել 43 երեսում statuquo բառերը:

Ի վերջոյ պէտք է յիշել, որ պ. Շառտը իր գրքոյկը նուիրել է «Անմահանուն Գրիգոր Արժրունիի մահուան տասնամեկի և Մշակի երեսնամեկի առթիւն»—ուն, յայտնի չէ. երևի՛ Գրիգոր Արժրունու յիշատակին: Բայց ինչ կապ կայ Գրիգոր Արժրունու յիշատակի և գրքոյկում տպուած խակ-խակ հասա-

րակագիտական դատողութիւնները մէջ: Վերջապէս՝ չէ որ Արծըրունին համայնական չէր, այլ թունդ անհատական:

Յարութիւն Եսայեան. «ԳեԱնՔի ԲՕՄԱնԻՑ». վէպիկ. 147 եր. գ. 25 կ.
Թիֆլիս, 1903:

Ձը կայ և չի կարող լինել ամենագէտ մարդ, բայց ամեն գրականագէտից կարելի է և պէտք է պահանջել, որ շատ աւելի բան իմանայ, քան միջին ընթերցողը, և, որ գլխաւորն է, իմանայ, թէ ինքը ինչ գիտի և ինչ չը գիտի:

Դժուար է երևակայել աւելի վնասակար երևոյթ, քան այն, որ ճշարի և բարւոյ գիտութեանը ծառից չը ճաշակած և կեանքի ու նրա օրէնքների մասին ամենամիամիտ հայեացքներ ունեցող անհատներ, մի տեսակ չարաբաստիկ գրելապաւով բռնուած, քարոզչի և ժողովրդական ուսուցչի դեր ստանձնելով, գրքեր են տպում ամենատարբեր բովանդակութեամբ, լինեն դրանք ստանաւորներ, վէպեր, թէ հրապարակախօսական զրուածքներ:

Այդ է պատճառը, որ, մեր կարծիքով, քննադատը, ինչքան էլ համակրութեամբ կամ ցաւակցութեամբ վերաբերուի խակ, անգրագէտ կամ տգէտ գրուածքների հեղինակների անձնաւորութեանը, այնուամենայնիւ պարտական է ամենախիստ կերպով հարուածել այդ գրուածքները, որովհետև գրականութիւնը ժողովրդի յառաջադիմութեան ամենագորեղ գործօնն է և այդ յառաջադիմութեան ամենալաւ ցուցարարը:

Մինչև լուրջ գրականութիւն չ'ունենանք, լուրջ ազգ չենք լինի:

Գոնէ ինձ վրայ ամեն մի հայ գիրք, որի հեղինակը դեռ կարիք ունի զարգացումը շարունակելու, այնպիսի տպաւորութիւն է գործում, ինչպէս մի ապտակ՝ հասցրած ամբողջ հայ ազգի, ուրեմն և ամեն մի հայի ինքնապիտութեանը:

Դրանով է բացատրւում իմ քննադատութիւնների խիստ ոճը, որ այնքան զայրացնում է հեղինակներից շատերին և այնքան անձնական թշնամիներ է ստեղծում ինձ համար:

Բայց բաւական է խօսել pro domo sua: Անցնենք պ. Եսայեանի վէպիկին:

Գրիչան համալսարանը նոր աւարտած փաստաբան է. Սերեոժան թերուս հաշւապահ: Գրիչան իղէալիստ է. Սերեոժան ապրում է միմիայն կեանք վայելելու համար, իղէալիստներ